

ՈՐՈՇՈՒՄ

7. փետրվար 2019, № 10/10

25.09.2018թ.-ի ԹԻՎ 25 ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ՀԱՍՏՍՏՎԱԾ «ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՎՃԱՐՈՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ 2018-2019 ՈՒՍՏԱՐՎԱ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԶԵՂՉՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ի լրումն և ի փոփոխումն 25.09.2018թ.-ի թիվ 25 գիտական խորհրդի նիստում հաստատված «Բակալավրի եվ մագիստրոսի կրթական ծրագրերով վճարովի ուսուցման համակարգում ընդգրկված սովորողների 2018-2019 ուստարվա վարձավճարների զեղչման համակարգի բարելավման մասին» որոշման՝ 3.6.7 և 3.6.12 կետերում կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

3.6.7 Մարտական հերթապահություն իրականացնող զորամասում մարտական հերթապահության կամ գործողության մեջ ընդգրկված պարտադիր զինվորական ծառայություն անցած ուսանողներին,

կետը այսուհետ. **Մարտական հերթապահություն իրականացնող զորամասում մարտական հերթապահության կամ գործողության մեջ ընդգրկված պարտադիր զինվորական ծառայություն անցած ուսանողներին, ինչպես նաև պայմանագրային զինծառայության ընթացքում ապրիլյան հերթապահություն իրականացրած կամ ապրիլյան գործողություններին մասնակից ուսանողներին**

- մարտական հերթապահություն՝ 30% զեղչ, ապրիլյան պատերազմում մարտական հերթապահություն՝ 50% զեղչ, մարտական գործողություն՝ 70% զեղչ,

3.6.12 Համալսարանի ռեկտորի, մանդատային հանձնաժողովի առաջարկությամբ և գիտական խորհրդի որոշմամբ ուսման վարձ մասնակի փոխհատուցում է տրամադրվում առանձնահատուկ դեպքերում այլ կարգավիճակ ունեցող և ուսանողի՝ Բակալավրի կրթական ծրագրով 86 և ավելի, մագիստրոսականով՝ 91 և ավելի ՄՈԳ-ի պարագայում,- կետը այսուհետ.

Համալսարանի ռեկտորի, մանդատային հանձնաժողովի առաջարկությամբ և որոշմամբ ուսման վարձ մասնակի փոխհատուցում է տրամադրվում առանձնահատուկ դեպքերում՝ այլ կարգավիճակ ունեցող Բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրով սովորող ուսանողներին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

